

ՀԱՅԱՍՏԱՆ

Ի Ր Ե Ր Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՐԿՐՈՐԴ, ԲԱՆԱՌՈՐԱԿԱՆ ԵՒ ԵՌԵՒՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ զրուուշ 100 :

Այս Լրագիրը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պոստին գուրս գացած Լրագիրներուն փոստային ծախքը տուածին ջրոյ է :

Իր շահին համար շուր մը հրատարակել ունոցը զիտի յճարի տոցին 40 փարայ :

Նորաստից գրոց ծանուցումը ձրի է :

Դուրսին եկած նամակներուն փոստային ծախքը զիտի յճարի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԼԻՍ 9 ՅՈՒՆԻՍ

— Թօփիանէի խորհրդոց ատենանին նախագահ մեծապատիւ Սուսա փաշայն՝ թնդանօթածիւր զօրաց գնդապետ Պ. Քնէզքօլօքին. և բրուսիայի զինուորական ճարտարարուեստ Պ. Պետօնը հետն առնելով Սուսայի քանի մը սահմանադրուած տեղերը դացեր էր բերդերուն պէտք եղած ամրութիւնները նայելու. և նորոգութեան կարօտ եղածներուն վրայօք ալ տնօրէնութիւն ընելու համար : Ստոր գաղտնի Վառնա, Սիւրսոյրէ, Սուսա քաղաքի և Շուսի, և նորէն Վառնա ետ դարձան, և անկէջ շոգենաւով մայրաքաղաքս հասան : Երրորդութեան կարօտ գտան Սիւրսոյրէի բերդը, և պէտք եղած տնօրէնութիւնը ըրին, և գործըն ալ սկսելու ձեռք զարնել տուին, որ եկող տարի չի լրանցած այս գործս կը լրանայ : Սիւրսոյ լրմընայէն ետքը Վառնայի կողմը Տօփու ըստուած լիճը, որ վեց ժամու ճամբու չափ երկայնութիւն ունի, մէկ ջրանցքով մը ծովու հետ միացնելով նաւահանգիստ պիտի ընեն, որ շատ աղէկ բան մը կ'ըլլայ, որովհետեւ սեւ ծովու մէջ աղէկ նաւահանգիստ խիստ քիչ կայ :

— Սիւրսոյ առաջ ծանուցիւր որ խորհրդի կրակէն ետքը մեծազօր տեւութեան հրամանաւ հասարակաց շինուածոց տեսուչ բարձրապատիւ Խաչաթիւ փաշայն նոյն գիւղը մէկ նոր ձեւով մը շինել տալու համար հոն խորհուրդացաւ : Այս ճանապարհորդութիւնը բարձրապատիւ փաշայն երկու անգամ ըրաւ. և գիւղին նորոգ շինութեանը համար ըրած կարգադրութիւնըն է այս : Դիւրան անմիջապէս առաջը քան կանգուն լայնութեամբ բաց հրապարակի պէս ճամբայ պիտի մնայ, որ բոլոր գիւղին ծովեզերեայ երկայնութիւնը պիտի բռնէ. և այս ճամբուն ցամաքի կողման եզրը կարգաւ խանութները պիտի շինուին. ա. մեն խանութին՝ երեք դէպ ի ծովը նայելով : Գիւղին մէջի արահետ փողոցին (ճատտէին) լայնութիւնը պիտի ըլլայ 15 կանգուն. ուրիշ մասնաւոր փողոցներուն լայնութիւնը պիտի ըլլայ 8 կանգուն : Նամբայները ձիւք ուղղադիւր պիտի ըլլան. որ մէկ ծայրէն ալ մէկալ ծայրը անխափան տեսնուի. և ուղղանկիւն ձեւով պիտի միանան արահետ փողոցին հետ : Ստոր այսպէս տնօրինելէն ետքը փողոցներուն տեղը որոշելու և հիմերուն տեղը բանալու համար Կոստանդնուպօլսէն մէկ ճարտարարուեստ (միւ-

հէնտիս) և երկու քաջաւ, և բաւաւ կանին չափ ալ խրովաթ բանուորներ խրկեց : Այս կերպով խորհրդալ գիւղը շինուելէն ետքը մեծազօր տեւութեան երկիրներուն մէջ կանոնաւոր ձեւով շինուած գեղեցիկ տեղերուն առաջինը կ'ըլլայ. և կղզիներուն ալ մօտ ըլլալով ամուր դացուները կը շատնան. անգղայն գեղեցիկութիւնը և բարեշինութիւնը տեղացոց ալ ըստակ փաստիկուր դուռ մը կը բանայ. և անով կարելի է և կը բարձանք ալ որ գիւղը աղէկ ջուր ալ ինջեցնելու կարող ըլլան. որովհետեւ գիւղին ջուրը շատ աղէկ չէ. և գիւղէն մէկ ժամու չափ վեր լեռը Լաքաճը անուն տաճիկ գիւղին մօտ պատուական և առաւ ջուր կայ. որ կրնայ գիւղը իջնալ և աղբիւրներուն բաժնուիլ : Գիւղին փողոցներուն կարգադրութեանը և հիմերը բանալուն պէտք եղած ծախքը մեծազօր տեւութեան գանձէն ելլալ տնօրինուած է :

— Իզմիրու նահանգին ընդհանուր կուսակալ բարձրապատիւ Խաչիւ փաշայն՝ ձեռմակ ծովու կղզիներուն ընդհանուր կառավարիչ անուանեցաւ. և նոյն կղզիներուն կառավարիչ Բաղուպ փաշայն ալ Իզմիրու նահանգին ընդհանուր կուսակալ եղաւ :

— Կոստանդնուպօլսէն իրականութեամբ մեծապատիւ Վալի Սիւրիւթ ֆէնտիս արտաքին գործոց տեսուչ բարձրապատիւ նախարարին խորհրդական դպիր (սրբ քեթիպի) անուանեցաւ :

— Բարձրագոյն գրան թարգմանուէ գիւնանի գլուխ մեծապատիւ Սուրէտ տին պէյ է ֆէնտի կայսերական գիւնանի առաջին թարգման անուանեցաւ : Այս պաշտօնս երկար ժամանակէ ի վեր նոյն մեծապատիւ անձը կը կատարէր առանց անունը ունենալու :

— Բարձրագոյն գրան թարգմանութեան գիւնանի անդամներէն մեծապատիւ Ռեմէլ է ֆէնտիս նոյն գիւնանի առաջին թարգման եղաւ :

— Սեւազօր տեւութեան ասդիս անդին ճանապարհորդութիւն ընող շոգենաւերուն տեսուչը Կոստուֆ Զաճճար, որ վաճառականութեան խորհրդարանին ալ անդամ էր, ժամանակէ մը ի վեր հիւանդութեան մէջ տառապելէն ետքը անցեալ հինգ շաբթի օրը յունիս 21, մեռաւ :

— Նոյն շաբթու թրիէստի շուգենաւով մայրաքաղաքս Երուսաղիմ արուեստից հանգեալ տեսնելու համար ճամբայ ելաւ Երուսաղիմէն լեթ անուն հնդիկ իշխանը, որ բնիկ Հնդկաստանի Ուտ գաւառին Ուտ անուն մայրաքաղաքը ծնած է, և ժամանակէ մը ի վեր Պաղատա կը կենար. քանի մը օր հաղիւ կայ որ Պաղատա տէն մայրաքաղաքս եկած էր :

— Վեհափառ ինքնակալը՝ բժշկութեան կայսերական դպրատան դասա-

տու Տօրգօս Սիւրէր երեւելի բժշկին դպրատան յառաջագիմութեանը վրայ ունեցած ջանքը աշակերտներուն յառաջագիմութեանէն յայտնի իմանալով՝ իրեն ալ եվելօք քոհ ըլլալուն ապագայը յիշեալ իմաստուն և ճարտար բժիշկին ընծայ՝ աղամանդներով զարդարուած մեծագին և պատուական մէկ շաբթի մը խրկեց : Տօրգօս Սիւրէրը՝ որ շատ մարդոց ալ ծանօթ է մայրաքաղաքս մէջ, չէ թէ միայն յիշեալ դպրատան մէջ, այլ հասարակութեան մէջ ալ պէտք եղած տեղերը աղէկ ծառայութիւն ընելուն համար յիշաւի պատուոյ և յարգանաց արժանի է : Առաջ բժշկութիւնը դիպուածական բան մըն էր մայրաքաղաքս. թէպէտ երեւելի է իմաստուն բժիշկներ պահաւելու չէն, սակայն անհմուտ մարդիկ ալ բժշկութեան ձեռք զարներով՝ հասարակաց միտքը գրեթէ կանգնած մը միտքուցած էին թէ բժշկութիւնը հաստատուն կանոնի վրայ հիմնած գիտութիւն մը պիտի չըլլայ. ըստ գիւպաց բան մը պիտի ըլլայ : Սիւրէր իր յաջողակ ճարտարութեամբ իմացուց որ յիշաւի բժշկութեան արուեստը հաստատուն կանոններ ունի. և այն կանոններն ալ ինքը գիտէ : Այս գիտցած կանոններն են որ աշակերտներուն ալ անխափան ճարտար սորվեցնելով կայսերական պատուոյն արժանացաւ. ինչպէս որ գործադրութեամբ ալ հասարակաց հաճութեանը և գովութեանը և յարգանաց արժանացեր էր : Սոր և ընկերներուն ջանքով շատ ժամանակ չանցիր՝ վեհափառ կայսեր և մեծազօր տեւութեան հօր և բարեկարգեալ հովանաւորութեամբ բժշկութեան կայսերական դպրատանէն Գերմանիայի և Վաղդիայի և Խաչիւրի բժիշկներուն հաւասար համբաւով բժիշկներ պիտի ելեն. բժշկութեան մասնաւոր դպրատաններ պիտի շատնան. և մարդ պիտի չտոխտուի այս օգտակար գիտութիւնը սորվելու համար տարիներով Եւրոպա պանդխտութիւն քաշել : Ասոր փորձը քանի մը տարի առաջ եղաւ, երբոր Կոստանդնուպօլսոյ կայսերական դպրատան աշակերտներէն քանի մը հոգի, որոց մէկն էր մեծարգոյ Ստեփան պէյը Սյունեան. որ հիմա նոյն դպրատան դաստաւներէն է, Վիէննա երթալով միայն տարի մը հոն կեցան, և բժշկութեան մէջ ըրած յառաջագիմութիւնն այն տեղը հրապարակական քննութեան մէջ ապացուցանելով՝ փառաւոր վկայակաւով մայրաքաղաքս դարձան :

Նշանակելու արժան կը սեպեմք այս ալ որ՝ բժշկութեան կայսերական դպրատան մէջ աշակերտութիւն ընող անձանց մեծազօր մասը տաճիկ են. անոնցմէ ետքն են յոյները՝ բազմութեան կողմանէ. և հայերէն միայն

ուրթը ինն հոգի կան. թէպէտ բժշկութիւնը աղիւ և շահաբեր գիտութիւն մըն է :

— Ստոր 16 ին շաբաթ օրը առտուանց՝ մեծազօր տեւութեան բէիթի թիճաթէի շոգենաւը, որուն նաւապետն է Վալի պէյ. Սիւրիայի և Կիօք սուլի միջոցը երկու ըստուած յունական պրիւնաւուն կը պատահի. որ Վառնայէն կուգար գարիով լեցուն. և Սեւ ծովու մէջ աղէկ ութութեան պատահելով և ծակ բացուելով՝ մէկ ժամու մէջ 24 մաս նաչափ ջուր կ'առնէր. ըսել է որ շատ մեծ վտանգի մէջ էր : Սեւ մարդիկը պօռալով և աղաչելով անցնող նաւերէն օգնութիւն կը խնդրէին : Վալի պէյը այս տեսաւ՝ նաւը աղտոտելու համար ձեռքէն եկած միջոցները ի գործ դրաւ. և շատ աշխատելէն ետքը նաւը վտանգէն ազատեց :

— Նոյն երկուշաբթի, յունիս 25 Նիւպալի մէկ ահագին հրդեհ մը պատահեցաւ կէս օրէնքի մը առաջ : Շուրջ 50 սաստիկութեան առաջը չի կրկնեցան առնել. որ Կոստանդնուպօլսոյ բարձր պարսպէն ներս ալ անցաւ և շատ տարածեցաւ. և մինչեւ որ կէս օրէն ետքը հովուն սաստիկութիւնը ինկաւ նէ՝ այրած խանութներուն և տուներուն համարները 144 ի հասաւ. տուներուն շատն ալ ընդարձակ ապարանքներ էին. մէկ մըն ալ մըլիթ ալրեցաւ. թէ որ հովը ինքն չըլլար նէ շատ գէշ կ'ըլլար : Բոլոր բարձրատի ճան նախարարները և ստորին աստիճանի պաշտօնատէրները հոն էին. Կոստանդնուպօլսոյ ամէն կողմէն ջրմուղ գործիքներով շէնք փրցնողներ (թուլուպաճի և եանկըն տիւրիէրի) եկած էին. հովէն միջոց գտածնուն պէս ա. մանայն զբոսութեամբ աշխատեցան և կրակին առաջն առին :

— Նիւպալի աղէտալի կրակէն երկու օր մը ետքը մէկ մարդ մը հետաքրքրութեամբ կրակին տեղը տեսնելով՝ կ'երթայ. որովհետեւ կրակը կատարեալ մարած չէր, Բոլաճապաճիէրը հոն էին. և մէկ տեղաց բոց մը տեսածնուն պէս ջուր կուտային կը մարէին, որով փողոցը թրջած և տղմուր բան մը եղած էր. անցուդարձի ճամբայ մնացած էր Նիւպալի պարսպին առջեւի քարայտալի. ուստի հետաքրքրիւներն ալ այն տեղ բաւական բազմութիւն ժողովուած էին. ըսած մարդերնիս ալ հոն էր : Սեւ մըն ալ քովի գրպանը դրած ժամացոյցին մնաս բարով ըսելուն նշանը կը դրայ. շուտով կը դառնայ մէկ յոյն երիտասարդի մը ձեռք կը տեսնէ որ ժամացոյցը որսոյցը գրպանէն դուրս կ'ելլէ. նոյն հետոյն երիտասարդին օձիքէն կը բռնէ, երիտասարդը գողոնը ձեռքը բռնուիւր աղէկ չըլլալը գիտնալով ժամացոյցը գետնի կը ձգէ. բայց տեսնող վկայներ կ'ըլլան : Ժամացոյցին տէրն ու գողը իրարու հետ վեճ ըրած

մեծ զուարճութիւն մը չգտար :

Ընդհարակէ եկած հովուական տիկ (չօպան թուրուս) մը, հայուէ (էօս աղաճը) և ասպալ փայտերէ շինուած, չի տեսնուած բան է :

Խելքիս չի հասնելու արուեստաւ շէն բաներուն մէջ ասոնք ալ յատուկ յիշելու արժանաւոր տեսայ : Սառայ (պուզ) շինելու գործը մը, որ կրաւ կով և գործը շինելու ուժով կը շարժի, և ուզած չափովը և մեծութեամբը սառայ կը շինէ : Օտարութիւնը 18 հօ խայ, բայց ամեն կտորներովը ծալելով և ամփոփելով գրապանակի (ճիւղ տանի) պէս բան մը ըլլալով գործաւ ծուծիւնն ալ շատ դիւրին մէկ կառք (արապա) մը, և առանց վառօգի միայն առաձգական խէժի (կոմմա էլասա դիքայի) ուժով նետուելու մէկ թիւ ֆէնի մը հանդիսարանը դրուած են :

Պէտքայի թագաւորը այս օրերս արուեստից հանդիսարանը տեսնելու համար Լօնտոն եկաւ :

Իրուսիայէն Ինկիլթեռայի արուեստից հանդիսարանը խրկուած բաներուն միայն տանողներովը և ուրիշ ասոր նման ծախքերը հաշիւ ընելով 1700 քէսէ ստակի հասած գտեր են :

Հանդիսարանը դրուած բաներուն մէջ անասնէր կան ի հարկէ, որոց շինողները յատուկ պատու տաւարու և պարգեւ առնելու արժանի են : Իսանները որոշելու համար պէտք է առաջ շինուածներուն մէջէն պատուական և ստորին կարգի շինուածները որոշել, և այս ալ միայն մէկ քանի հազիւ ըլլալու ըմբիւրու բան չէ. անոր համար այս օրերս բան հասկըցող ընտիր մարդոցմէ բաղկացեալ երեսուն ժողով սահմանեցին. որոց ամեն մէկն ալ իրեն կողմը բազմաթիւ անդրանակ նարարական ժողովանիներ ունի. որ առանց հանդիսարանը դրուած բաներուն ամեն մէկը մէկիկ մէկիկ նայիլ և քննելէն ետքը տէրը պիտի կանչեն. և հաւանութիւննին անոր յայտնելով արժան տեսնուած պատիւն ու պարգեւ պիտի հատուցանեն :

Հոս բան մըն ալ գրեմք. որ թէ պէտ արուեստից հանդիսարանին վերաբերեալ չէ, բայց արուեստական կատարելութեան կը վերաբերի. անոր համար հոս յիշելը պատշաճ է :

Իսլըր աշխարհքի մէջ շինուած նաւերուն ամենէն գեղեցիկը և ամուրձ ինկիլթեռա և Լմերիկա շինուածներն են : Հիմա այս երկու նահանգներուն վարդապետները որոշել կ'ուզեն իրենց մէջը թէ որեւորուն շինածը գեղազանց է : Աստի խօսք ըրին որ մէկ նաւ մը Լմերիկա, և մէկ նաւ մըն ալ ինկիլթեռա շինուի. և երկուքն ալ Հնդկաստան կ'աղակա խրկուին. և որն որ ետ մնայ նէ՛ առաջ գացողին արուի : Ինկիլթեռ տէրութիւնն ու Լմերիկայի կառավարութիւններ երկուքն ալ հաճութիւն տուին. և հիմա ինկիլթեռա վարպետ նաւ շինողներ այս բանին վրայ խորհուրդի ժողովուած ըլլալով մէջերին որոշուած կերպովը նաւը շինելու սկսուած է : Լմերիկայի համար ալ նոյնը կը լսուի :

Ինկիլթեռայի երկաթ ծամբայնէրուն վիճակն ալ այս է : Սինդէ հիւ մա 5131 մըն տեղ ծամբայ շինուեր է. և գալած ծախքն է 90.000.000 քէսէ ստակ : Իսկէց զատ հիմա շինուելու վրայ 1455 մըն ծամբայ կայ. և այս բանին մէջ ինկիլթեռ տէրութեան ընելու շահը հարկուրին երկուք հազիւ թէ կը հասնի :

Ըլլալով որ անգղանք որ ձայնը կը լսուէր նէ. բնակիչները կը դողային, ան ջաճները բռնուեցաւ, բայց մեծ դժուարութեամբ և դատաստան տեսնուելով մահուան դատապարտուեցաւ : Իստաստանական վճիռը ի գործ դրուելէն ժամանակ մը ետքը Փարիզու Էմիլիոն ըսուած օրագրոյն մէջը մէկ յօդուած մը հրատարակուած տեսնելովեցաւ. որուն հեղինակն էր անուանի Պ. Վ Էքթօն Հիւկօն տղան Պ. Շառլ Հիւկօ : Լմերիկայ Սոնորմօնին մահուան դատապարտութիւնը առիթ բռնելով մահուան պատժոյ դէմ ելաւոր խօսած էր. և ապացոյցներ և վերջապէս թիւններ գտնելով հաստատել կ'ուզէր թէ մէկ մարդ մը ինչ և ինչ յանցանքով բռնուած ըլլայ. մահուան դատապարտելը անիրաւութիւն է. եւ այն : Լմէն մարդ կ'իմանայ այս դրութեան հետեւութիւնները. մեռելները վերնայ նէ՛ մասնաւորայ մէջ սպանութիւնը կը շատնայ. թշնամին մեռելները համար մէկ մարդ մը կ'ընայ քանի մի տարի բանտը կամ բռնական կենտրոն աչքին առնել : Պ. Շառլ Հիւկօյն դրութիւնը վնասակար բան մըն էր. ուստի դատաստանի կանչուելու, հայրը փառաբանութիւն ըսաւ. բայց չի կրցաւ տղան դատապարտութենէ զատուել. որ վեց ամիս բանտը մնալու դատապարտուեցաւ : Իսլըր օրագրոյն այս վճիռը պատմելէն ետքը կը ցուի որ տպագրութեան առաջադրութիւն չի կայ Փռանսա. որպէս թէ ամեն կառավարութեանց հիմնական օրէնքները խախտելը փափաքելի ազատութիւն մը եղած ըլլար :

ՀԱՅԱՍՏԱՆ : Չինաց երկիրը ինկիլթեռ վեզուով տպուած լինա մայր անունը կը պատմէ որ չինաց Բանդօն նահանգին նախկին փոխաբայն Քի-ինկ, որ հիմա տէրութեան աչքէն ինկաւ է, մէկ մասնաւոր գիւղ մը շինելու և տպերէ իրենց լեզուովը. որկէց կ'երեւի որ հիմա այն ազգին երեւելի կարգացողները որ մահաբան կ'ըսուին, իրենց մասնաւոր գործ մը ըրած են քրիստոնէական կրօնը հասկնալու ետեւէ ինքնալը : Եւ ասոր պատճառը ինչպէս որ կ'երեւի՝ ոյս պիտի ըլլայ :

Չինաց կայսրը քանի որ հայրը մեռնելէն ետքը կայսերական աթոռը անցաւ, չինաց երեւելիները կ'ուզեն որ քրիստոնէից դէմ հալածուած ելէ. որովհետեւ հիմա և յատկապէս ինկիլթեռուն հիմա պատերազմէն ետքը Բանդօնէն զատ ուրիշ քանի մը քաղաքներ ալ եւրոպայիներ մընտնելութեամբ ինկիլթեռուն ըլլալուն վրայ՝ քրիստոնէայները խիստ շատցած են : Կայսրը այս հալածման հաճութիւն չի տար. որովհետեւ ինչպէս որ քարոզիչները ստուգած են, կայսեր տղայութեան ժամանակէն դայեակը մէկ քրիստոնէայ կին մը ըլլալով անոր մատուց տարիքէն քրիստոնէութեան վրայ աղէկ դադարեցանքներ միտք տալու և որովհետեւ քրիստոնէայներուն վրայ սիրտը տաքցուցեր էր : Ինչպէս որ մէկ կարգացող կուսակալ մը քրիստոնէայներուն դէմ հալածման պէս բան մը հանել, քանի մը մարդիկ ալ հաւատաքի համար բանտը դրել էր. Փռանսոյն դեսպանին ստիպելովը հարկ եղաւ որ այն մարդիկը բանտէն հանել թող տայ : Եւ այն կուսակալը քրիստոնէութեան դէմ գիւղ մըն ալ հանած էր. որուն երկանկէ հատուածներուն գաղղիներէն թարգմանութիւնն ալ տեսանք Փռանսոյն օրագրոյն մը մէջ. որ ամեն առարկութիւնները գիտես թէ Վօլդեռէն առեր է. ըսել է որ անանկ խօսք մը զրուցած չէ, որուն լիակատար պատասխանը շատ անգամ տրուած չըլլայ :

Եւ չինաց կարգացողներն ալ այն գիւղէն գահ չեն. և վերոյիշեալ Քի-ինկ նախարարին շինած գիւղէն քանի մը կտոր բան քրիստոնէայ քարոզիչները թարգմանել և վնա մայր տպերին միջոցաւ ծանուցել են : Եւ հատուածներուն մէկուն մէջը Քի-ինկ կ'ըսէ. « Լմերիկան ժողովուրդին գործածած կրօնը քննելի և իրապէս աղէկ գտայ » : Եւ նախկին պաշտօնաւորը բաւական ժամանակ Բանդօն կուսակալութիւն ընելով իրեն ուրիշ պաշտօնակիցներէն աւելի առիթ ունեցեր էր քարոզիչներուն հետ խօսակցելու և քրիստոնէութեան վրայ անդեկութիւն առնելու. երբոր 1845 ին ֆռանսոյն դեսպանին թախանձելով յայտարար գիր մը հրատարակեց, որով հրաման կուտար որ քրիստոնէական կրօնից պաշտօնները հրապարակաւ կաւ կատարուին, եւ կեղեցիներ շինուին, և այն. և ասով ըստ իմիջ կրօնից աղաւթութիւն ստեղծ էր : Իսկ ինչպէս որ նոյն լինա մայր կ'ըսէ, չինաց պաշտօնատէրներէն գրուած զանազան պաշտօնական գրուածքներ կը ծանուցանեն որ, ծովեղբերէն հեռու դաւաճներն ալ կառավարիչները քրիստոնէական վարդապետութեանց վրայ եփ աղէկ ճիշդ տեղեկութիւններ առած են :

Իսկէց առաջ ծանուցած էինք որ չինաց երկիրը տպագրութիւն կայ. և տպագրութեան գիտաւորութիւնը թագաւորական ցեղը փոխել է, որ հիմա թագաւորութեան մահաբան ցեղէն, և անուանի Ղինկիլթեռ խանին ժառանգն է. և բուն չինացիներէն կայսր դնել է : Եւ այսպիսով բուծութեան չինաց տպերները մարած և ցրուած կը ցուցնեն. կայսեր սիրտը հանդարտեցնելու համար. բայց իրօք անանկ չէր : Եւ առնուած ըստ իրենց կրօնի որ Բուան-Սի և Բուան-Սի զաւառներուն մէջը շինութեան շատ է. և օրէնքն ֆրայս օլ լինա ըսուած ինկիլթեռ տպերը որ Չինաստան կը տպուի, Եւրոպայի տէրութիւններուն կ'ըսէ որ այս բանին վրայ աղէկ խորհին և թեթեւ բան մը չի կարծեն : Եւ Բայքիէն տեղերը աւարտամբները յանկարծ կայսերական զօրաց վրայ յարձակեցան. և թէ քաղաքական թէ զինուորական հրամանատարները ամենն ալ մեռցուցին :

Իսկէց ժամանակ մը առաջ. 1849 փետրուար ամսը մէջ Զօն Բօն կղզին որ է չինաց տէրութեան տակը, երկու ինկիլթեռ սպանուեցան. և քննութիւն ըլլալով սպանութեան յանցանքը Չույա-Բօն անուն չինացի մը վերայ մնաց, որ ընկերներով փախեր ծովը գողցուած խառնուէր էր : Երբոր ինկիլթեռ նաւերուն գործակալութեամբ ըր այս գողցուած վերցան, Չույա-Բօն ին աւանտը չի զրուցուիլ սկսաւ. մինչեւ որ այս տարի փետրուարի մէջ Բանդօնի գալով բռնուեցաւ և ինկիլթեռներ արկիպ գտնուի և ձեռք տուողին վարձք խոստացեր էին. Ինկիլթեռ դատաստանական ատենին առաջը հանուեցաւ, և հին սպանութեան յանցանքը թեթեւցաւ. որովհետեւ ինկիլթեռները Չույա-Բօնի ազգականներէն կին մը գլխէ հանելու ետեւէն եղեր. անոր համար Չույա-Բօն ասոնք սպաններ է : Եւ այսպիսով պատիժը վճռուեցաւ որ այն երկրէն դուրս հանուի, և մինչեւ գործադրութեան ատենը բանտը դրուի : Եւ այսպիսով ծանր եկաւ դատապարտուելն. ուստի չուան գտնել տուաւ, և բանտին մէջ ինքզինքը կախեց ու մեռաւ :

Եւ գիւղականոյ վրայ երկու խընդիր եղաւ. որ թէպէտ ուրիշ ամեն տեղ, բայց քաղաքացիական չինաց երկրէն կարեւոր բաներ են, երկու աւ-

րութեանց մէջ եղած բարեկամական կապակցութիւնները չաւրուելու համար : Եւ ինչն է. նորեք ինկիլթեռ երգուելու դատաւորները կրնան մի չինաց տէրութեան հպատակ մէկը դաւաճելու դատապարտուի : Երբոր, ինկիլթեռ դատաւորները կրնան մի չինաց տէրութեան հպատակ մը նոյն իսկ չինաց երկրին մէջ բռնել տալ առանց առաջիկայ հրաման ուղեւոր տեղեւոր կառավարութեան, և անոր գործակալութիւնը խնդրելու : Չի կարծուիր որ Բանդօնի ինկիլթեռներուն վերին հրաւանատարը այս բանիս հաճութիւն ունեցած ըլլայ. անոր համար կը կարծեմք որ ինչպէս որ արդարութիւնը և աղգաց իրաւունքը կը պահանջէ, Չույա-Բօն բռնել տուող և դատողները հրապարակաւ ծանր յանգի մահութիւն տեն. որով չինաց կառավարութեան ալ մէկ պատուաւոր հատուցում մը եղած կ'ըլլայ : Թէ որ այս չինացիներն ալ ինկիլթեռ յաւորները բռնելու և իրենց դատաստանովը դատելու և դատապարտելու իրաւունք վատարկած կ'ըլլան. որուն վերջն աղէկ չըլլար :

Սոսմադրա կղզւոյն արեւմտեան կողմին բնակիչները Սիլիկայի վաճառականութեան քիւմիլիա ըսուած նաւը բռնել, և նաւապետն ու երկու նաւաւոր մեռցուցեր են : Եւ անուն մէջ 20.000 ֆոլլը կար. անոնք ալ առեր են : Եւ իսկ Սիլիկայի երկու նաւայս քիւմիլիա նաւը այն վայրէկանութեան ձեռքէն առեր ֆռանսոյն նաւապետներուն յանձնել են. անոնք ալ Պուալոն կղզին խրկել են :

Կամպիա գետին եղբերներէն ալ կը գրեն որ ինկիլթեռ քիւմիլիա նաւը այն տեղի վայրէկան բնակիչները բռնել են, մէջի բաները կողոպտելէն զատ մարդիկներէն ալ քանի մը հոգի գերի են ըրեր :

ԵՐԳԱՅԻՆ

ՀԻՆ ԹԵԼԱՏԱԿԱՐԱՆԻ

Լմնապատիւ Սրբազան Պատրիարք Զօր արժանաւոր փոխանորդ Տ. Թադէոս ուսումնաստեղ վարդապետը ըսած ըլլալով որ Սոյ աթոռը հայոց Լէոն թագաւորի անուամբ աւետարան մը կայ, նոյն սուրբ աթոռոյն ուսումնաստեղն ուսումնաստեղն վարձապետ Կեսարացի Լուսեռեան Պ. Կառապետին գրեր էր որ յիշեալ հին ձեռագիրը գտնէ. և թէ որ մէջը յիշատակարան մը կայ նէ՛ նոյն յիշատակարանը օրինակէ և հոս խրկէ, որպէս զի լրագրոյս միջոցաւ հրատարակուի : Եւ յիշեալ վարձապետը նոյն նամակին պատասխան այս նամակս խրկել էր. որ արժանապատիւ փոխանորդ Վարդապետը շնորհ ըրաւ մեզի տալու. հրամանաւ որ լրագրոյս մէջ հրատարակեմք :

« Լրժանապատիւ Տէր :
« Իստ հարկեցուցանող հրամանի բարեխախտման Սրբութեանդ քննեալ զամենայն ձեռագիր մատենան որք կան ի գրատուն և ի գանձարանի սրբոյ աթոռոյն Կիլիկիոյ, թէ և զառաջինն ծանուցաք ձեզ զոչ գտանիլն ինքրեւն աւետարանի Լէոնի հայոց արքայի, բայց ըզձայնեալ ի ձեռք բերել զայն յուսով որոնեալ յօդէն յայնմանէ. ահա գտաք ի գանձատան զմագաղաթեայ աւետարան մի պատուական ձեռագիր. յորոյ վերջաբանին յետ երկարութեն գովութեանց սրբոյ աւետարանին կցորդէ :

« Լրդ գրեցաւ սա ի ընտրանում խղիւղի ի հիւսիսակողմն թիկունս լեւրին որ կոչի Լրմէն, որ հուպ կայ եւ լիցանմատոյց ամբողջն Լամբրոնի. այն

ՄԵՐԵՐԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱԶԷԼԱ : Սոնորմօն անուն գող մը որ յաճախ մարդասպանութիւններ ալ կ'ընէր, և ձեռք անցնելը դժուար

որ երեւելի ճոխութեամբ նստի 'ի գլուխն Տարսնի յառաջնում գահաւանդակի ահաւոր լերինն Տորոսի 'ի թուականին հայոց 210 (1290) 'ի հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի յառաջնում ամի, և 'ի թագաւորական իշխանութեան հայոց խաղաղարար և բարեհամբաւ արքայորդուն Տեառն Հիթայի որդւոյ 1 էոնի. և գրեցաւ յաջնիւ և յամենայն տիրանակէ. տիրա և յարուեստ բանի ոչ յաննշան գրչէ. այլ լի և կատարեալ արուեստիւ 'ի բանս, 'ի ծորոցս, 'ի բայտոս, և 'ի արոհմունս առաքանութեանց. Յիշեալիք. . . և զիս զմեղուցեալ գրչիս Ստեփաննոս գոյն երիցանց. և այլ բարեմաղթութիւնք:

Պ ինի ժամանակաց ինչ այլով գեղեցիկ եւս գրչաւ վերստին գովարանեալ զսուրբ մատենան կորդէ:

Պ ի թուականին հայոց 214 (1345) ես կոստանդին հայոց արքայ ստացայ զսուրբ աւետարանս, որ է կազմեալ արծաթեղէն և ոսկեղէն նկարակերպ գեղեցիկութեամբ զարդարեալ. որ և ստացայ զսուրբ արքային իմոյ. զոր յառաջին նախնեաց մերոց հասեալ եղեւ առ մեզ նշան բարեաց, և նուազեալ զսուրբ աւետարանս ծածկել գեղեցիկ կերպարանաւք. և շնորհեցի զսուրբ եկեղեցւոյ ըստ փառաբանաց սրտի իմոյ և մեծ յուսոյ. միշտ յիշատակ լինել ինձ և ամենայն զարմից իմոյ և հաւրն իմոյ Տէր Պաղարի մարաշխոտուն հանգուցելոյն առ Քրիստոս. այլ և վասն յերկար կենդանութեան մերոյ և աստուածապարգեւ որդւոցն իմոյ 1 էոնի և 1 էոնի. և այլ բարեմաղթութիւնք. որպէս տեսանի յամենայն յիշատակագրութիւն ձեռագիր մատենից: Այս գրուած համարի լինել ինքնագիր կոստանդնուպոլս:

Պ ինձ թուի թէ ոմանք 'ի միաբաւնից կիլիկիոյ անհմուտք իրացն լինելով շփոթեալ են զկոստանդին ընդ որդւոյ իւրում 1 էոնի. և սոսկ բանիւ ստանալով զգովանդակ աւետարանն համարեալ ինքնագիր կոստանդնուպոլս, կամ որպէս համբաւեալն է 1 էոնի:

Պ ինձ ինչ և աւետարան 1 էոնի, չէանց 'ի ձեռս ցայսօր. և ոչ որ է որ տեսեալ ինչ զայն:

Արժանապատիւ սրբութեանդ:

1851. Դայիս. 3.

Ի Ս. Աթոռն կիլիկիոյ:

Խ. Ծ. Կարապետ Առաքել:

Հին յիշատակարանները պատմութեանց օգուտ կ'ընեն ըստնիս այս յիշատակարանն և կ'ընեն ըստնիս այս տանգին Դ հայոց թագաւորին համար՝ որ աւետարանիս երկրորդ յիշատակարանին հեղինակն է, ոմանք կ'ըսեն թէ Պաղարի թէ Հիթայի անուն հայադգի իշխանի մը աղայ է: Այս տարակոյսը պիտի մնար թէ որ ներկայ յիշատակարանը չի հրատարակուէր նե. ասոր մէջ նոյն ինքն Հիթայի թագաւորը յայտնի խօսքով իւր հօրը անունը կը ծանուցանէ, թէ Պաղարի Պարաւալան է:

Տիրութեան վիճակաւոր Առաջնորդ գեղապատիւ Տ. Կարապետ Սրբազան արքեպիսկոպոսին քովը գտնուած ձեռագիրներուն վրայ լրագրոյթ միջոցաւ մէկ երկու անգամ տեղեկութիւն տուած ըլլալով հիմա կը շարունակուիմք:

Պաղարի-ի հայոց 'ի Սաթրապի Կառնայի: Յետագիր և աղաւաղ գրչութեան: Սիւրբն պակաս կ'երեւի. որ հայոց ՆժԸ (Քրիստոսի 969) թուականը գնեւով կը պատմէ թէ Չմշկիկ մահապարտութեան յանցանքով բանտը գրուած ըլլալով կաղատի. և թաւազուցին հետ խօսք մէկ ընելով 'ի

կիփորոս թագաւորը կ'սպաննէ: Վեց թուղթէն ետքը կը պատմէ թէ Պաղարի թագաւորը իրեն անուցիւ և մանկակալ Հապուհ իշխանին օգնութեամբ խուժադու թրքաց հետ պատերազմեցաւ: Նիկէյ ետքը երկու թուղթ պակաս կայ. և ետքը մէկ տեւսիլքի կամ երազի մը պատմութիւն կ'սկսի. և Վաթիլ թագաւորին ծննդն տարի թագաւորութիւն ընելէն ետքը մեռնելը կը պատմէ:

Վաթիլն և երեք թուղթէն ետքը կը պատմէ թէ 1 էոնի թագաւորին որդին և թորոս մեծ Սեւաստոսին եղբայրը Ստեփաննէ, Տուկին ներգաւթեամբը սպաննուեցաւ. և թէ վրաց Պորգէ թագաւորը այն տարին առաւ հայոց Պուլին մեծանուն քաղաքը. և հոն պատմութիւնը կը լրացնէ. և անմիջապէս յիշատակարանը կը գնէ. որ յայտնի կ'երեւի թէ այս համբաւ գրչին բանը չէ. այս ալ իր օրինակէն առած է: Այս մէկը ըստ իմաստին և ըստ պատմական տեղեկութեանց ամբողջ համառօտելով հոս կը գնեմք:

Պ Րհնութիւն, գովութիւն. . . ըզմալի էր մարդը ներհուն լինել անցիւրջ. որով 'ի ինքիւր եղեալ Սատթէոս քահանայ՝ հրամանաւ մեծ իշխանին հայոց Վաթիլ յԱրհա քաղաք, գրէ ստուգութեամբ զինի այլոց պատմագրաց զՏ. Էս ժամանակաց, ըզպատմահման գործող հայկազանց և այլոց աղայաց, զուսուցութեան և զուսուցութեան, զպատերազմաց և զգերութեանց, զսովոյ և զարոյ: Արդ այսր մատենագրութեան փառաբող եղեալ մեծ րաբունապետ Տէր Սրապիտն ուր հայեցի, որ յայտմ ժամանակի սա միայն երեւի հոգաբարձու ծածկեալ և անյայտ պատմագրաց, զոմանս 'ի հեռաստանէ բազում ծախիւք ետ բերել. և զոմանս գրել. և զայն որ ոչ յայտնի շարագրով էր կարգեալ, ինքն 'ի գրոց յիշատակարանաց ժողովեալ հաւաքեաց 'ի տիկ զպատմութիւն և զժամանակաւ. որ և զայս պատմագիրս Սատթէոսի տեսեալ ետ ինձ թուած յիս գրել. թէպէտ և ոչ զգովանդակն լրաման, այլ զինքն և զթերի մնացեալն:

Պ Արդ եղեւ աւարտ սորա 'ի թուին Ռիթ (1580). 'ի գաւառն Կիլիկիոյ որ ասի Կիլիկիոյ, 'ի գաւառն սուրբ Նշանիս և սուրբ Սարգիսի և այլ հաւաքեալ սրբոցն որ աստ. 'ի հայրապետութեան Կիլիկիոյ աթոռն Տէր Պաղարի. Կիլիկիոյ 1 ուսաւորչի աջոյն հայրապետութեան Տէր Արաբիայի. որ է կաթողիկոս և վարդապետ տի. եղբարայոս աղբիս հայապետանայ. և 'ի թագաւորութեան Սուլթան Սահմէտին:

Պ Րիտիկն մէջ՝ ինչպէս որ ցանկը կը ծանուցանէ, հայոց թուականը Ռիթ նշանակածին ըստանցը տաճկի թուանշանով գրած է Վ. 59: Այս պիտի ըլլայ գրչութեան բուն թուականը, որ Կիլիկիոյի Պաղարի կաթողիկոսին ժամանակը գայ, որ հայոց Ռիթ թուականէն մինչեւ Ռիթ թուականը կաթողիկոսութեան ըրաւ. այլ և օսմանեանց Սուլթան Սահմէտ մէտ Գ. թագաւորն ալ հայոց Ռիթին թագաւորել սկսաւ: Նմանապէս Աղաբիա կաթողիկոսն ալ Սոյ աթոռը նստաւ Ռիթին. և վախճանեցաւ Ռիթին: Ուր հարեւանցի մը այս ալ ըսենք. որ Չմշկան Հ. Սիւրբայէ վարդապետը հայոց պապոն-իւն մէջ (հատոր Գ. Ռիթ. 536) Աղաբիա կաթողիկոսին վախճանը 1601 թուին կը գնէ, որ է հայոց Ռիթ. թիւը. և կ'ըսէ թէ՝ աս Ռիթի լիւսնալ անուն եւ կաթողիկոսարանը և եկեղեցին կողոպտեց նե՝ Աղաբիա կաթողիկոսն ալ սրտին ցաւէն հեւանդացաւ և մեռաւ 1601 ին, և հայոց Ռիթին, յունիսի 2 ին: Իայց հան

գուցեալ Տ. Նիքիթմ կաթողիկոսն Սրապի, որ նոյն աթոռն պատմութիւնը աղէկ գիտցած պիտի ըլլայ, աղապարհապառնալէս գրչին մէջ, Յովհաննէս Աթուրի կաթողիկոսին չեւանա պատմութեանն առնելով, որ յիշեալ Աղաբիա կաթողիկոսին անմիջապէս յիշորդն էր, կ'ըսէ որ Սոյ աթոռը կողոպտուեցէն ետքը Աղաբիա կաթողիկոսը Տէր Սիւսա աղապարհապառնային հետ մէկ տեղ արեւելք գացին. և երեք նորի այն կողմերը պարտեցան. սուրբ Կրիստոսի պարտուցը վճարման ստակ ժողովելու համար: «որպէս պապոն-իւնն ունի լիցոյն» կ'ըսէ Նիքիթմ կաթողիկոսը. և երբոր Նիքիթմ կամ Հալէպ գործան, Աղաբիա կաթողիկոսը հոն վախճանեցաւ. և գերեզմանն ալ սուրբ Քառասուն մահաւ եկեղեցին է:

Ուրիշ նշանակելու արժանի բան մըն ալ այս է որ, Սրապիտն ուրհայեցիին համար, որ ետքը Կիլիկիոյ կաթողիկոս եղաւ իբրեւ օչնական Պաղարի թէ Սիւրբայէ կաթողիկոսաց, 'ի թուին հայոց Ռիթ (1603), կ'ըսէ թէ յիշատակարաններէն առնելով պատմութիւն չինեց. Այս պատմութեան գիրքը մինչեւ հիմա տեսնուած չէ. և միայն այս յիշատակարանիս խօսքէն տեղեկութիւն ունիմք: Վասն յիշատակարանին խօսքին:

Պ Յաւարտիլ գրոյս 'ի կարի խիստ նեղութեան էաք. զի Հասի փաշայ մի պատեալ ունէր զԿիլիկիոյս, և բնակիչք սորա հայք և տաճիկք ամենեւին անհանգիստ դաւաւոր ձմերոյ պահէին մեծաւ զուշութեամբ գրաւաւք. և յաւանային կողմանց ամբարշտեցին զփողոցս քաղաքին անմատչելի 'ի թշնամեաց աւարեալ: Այս կայր անդ 'ի ներքս հանգիւցեալ մեծ վարդապետն մեր Տէր Պետրոս կարկառեցին եօթն աշակերտուքն, և Վաթիլ վարդապետն եղբն կայր նորուն աշակերտ, և ես թալմաւ տրուալ և անարժան 'ի մէջ նոցա, աշակերտ նորին մեծ վարդապետին: Այս կայր տարակուսեալ. այլ ողորմութեամբն Աստուծոյ դարձաւ յետս առ ժամայն. որպէս երբեմն պարսից թագաւորն 'ի Սիւրբայ քաղաքէ:

Պ Իսկ պատճառ երթալոյն րաբունայ մերոյ Կիլիկիոյ դաւաւ և յայտեղին մեծաւ պանդխտութեամբ և անհանգիստ աշխատութեամբ, այս է: Ի յայտմ ժամանակին 'ի Ռիթ թուին 'ի մեծին նեղութեան էր սուրբ գերեզման Քրիստոսի և սուրբ Յակոբայ, որ է աթոռ հայոց աղբի. և աւանթը սրբութեան, իսա՛ աւետարան՝ և այլ սպասք 'ի դրաւի կային 'ի ձեռս այլադգեաց. զի ընդ դուռուշ պարտք էր եղեալ. և առաջնորդն նորին Տէր Պաղարի եպիսկոպոս Սիւրբայի (ուրուն Կրիստոսի պատրիարք ըլլալը Հ. Սիւրբայէ Չմշկան, ժամանակագրական ցանկին մէջ 1609 ին կը գնէ, որ է Ռիթ հայոց թուականին), այս վեց ամ էր որ փախտական պահգործութեամբ շրջապայէր 'ի յահէ պարտաւարցն: Այս յետոյ անձարայեալ 'ի մեծ նեղութեան վտանգին եկեալ անկանէր յոռոս տէր Աղաբիայ կաթողիկոսին. և այլ վարդապետաց և եպիսկոպոսաց ժամանակին:

Պ Այս յաւաքեալ զնա երեալ յաթոռն գայր 'ի Նիքիթմ, Կիլիկիոյ և Կիլիկի հասեալ դադարէր. և մեծաւ թախանձանք կոչեաց զվարդապետն մեր տէր Պետրոս և զտէր Սրապիտն զառաջնորդն Աղապարհապետին. և այլ բազում վարդապետք և եպիսկոպոսք ժողովեցան առ ազատել զսուրբ գերեզմանն Քրիստոսի. և վիճակաւ բաժանեցին զերկիրն 'ի վարդապետաց գնալ և նուիրակել զերկիր: Այլ 'ի ժամանակին դաւաւորութեան ամենեւեան հրաժարէին. բայց յետոյ սիրովն

Քրիստոսի ըզմահ իսկ յանձն առեալ եղեալ շրջէին ընդ ամենայն տիեզերս:

Պ Ինչ որս և մեր վարդապետ, որ այս մարմնով յոյժ տկար էր, այլ հոգւովն փոյթ, արի օգնական հօտին Քրիստոսի, մեծաւ աշխատութեամբ ել 'ի շրջապայիլ Կիլիկիոյ, 'ի Կամախ, 'ի Քարեթի և 'ի Կարին և այլ հեռաւոր գիւղս և 'ի քաղաքս. ընդ որում և ես 'ի միասին էի. և աղբ առնէր զեկեալ հասեալ նեղութիւն Կրիստոսի զեմի: Այլ թէպէտ այնքան դաւն էր ժամանակն, մինչ զի ոչ իշխեալ յաւանքն ողորմութիւն խնդրել, բայց ինքեանք յաւաքէին զմեզ և սիրով տային զսուրբ ողորմութեան 'ի ձեռն վարդապետիս մերոյ:

ԱՐՏԱՎԻՊ

Արտաւորական բաներու գործընկերը շարժելու տեսնելովք և ըստ լինիլի կը կարծէինք որ ուրիշ շատ արուեստներ ալ շուրջի ու ժողով պիտի կրնան բանաւ. բայց մարդու մոգէ չէր անցնէր կարծեմ, թէ շուրջի ու ժողով երկրագործութիւն ալ կրնայ ըլլալ: Այսպիսով լրագիրներու մէջ կը կարգամք որ այս ալ եղեր է Կիլիկիոյ դաւաւ. և ի զուրկ իրեկի իրեն Կիլիկիոյ թուած երկրորդ ունեցած արտերը շուրջաւոր խորով (սապանով) հերկէր է: Խոփքաւոր ուղղը շուրջի կը շարժի. անիւր դաւաւոր համար չինուած երկաթ ձաճան ալ մէկ տեղ մը յատկացած չէ՝ շարժական է. փորվելու տեղին մէկ զին կը հաստատուի: Սաճը մէկ երկաթ շրջութայով մը այս սայլին շուանին կը կապեն. քովն ալ ուրիշ մաճ մը, որ խօփը անոր վրայ է. անանկ սայլը կը քալեցնեն: Ասով գետինին հերկուածքը անխտոր ուղղը գծի վրայ կ'ըլլայ, որ եղբ անանկ շետակ չի կրնար հերկել. և գետինն ալ բաւական խորունկ կը փորուի: Վասնի մի անգամ փորելով այս փորձը պիտի շարունակուի. և անկեց ետքը պէտք եղած տեղեկութիւնները մանրամասնաբար պիտի հրատարակուի:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Սիւրբ Կիլիկիոյ թիւնէն և Կիլիկիոյ շարժարձաւ աղապարհապառնալէս զբնական շրջաւոր ըլլալը այս շաբաթ Բիւնիսի պիտի հանէին. բայց Բիւնիսի հանելու մարտը չիլ մը հիւսիս ըլլալը ամայս վերջորոն մնաց. և Ելիւլ-ճիշտ օրն ալ պիտի ծանոցանայ: Վասնի մը ծախոս պիտի տալ մնացած կան Պիտիլի-Բիւնիսի շաբաթ Բիւնիսի և հագոսապի վաճառական Պ. Սիւնիսիս Դիւնիսի Բիւնիսի, և Կոստանդնուպոլս Իշխան-Սիւրբայի թուած ծախիւծ մաղալան: Բիւնիսի օրն որ Ելիւլն է, միւլե-Բիւնիսի Ելիւլն օրն չի ծախոսած պիտի շաբաթ Բիւնիսի պիտի վրձարէ. և միւլե-այն օրն պիտի տալ պիտի վրձարէ. և Բիւնիսի անոր էլ չի ալ չի պիտի. Ելիւլն օրն ըստիւլ չի վրձարձած պիտի շաբաթ պիտի շաբաթ չի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼԵՐԱԳԻՏ

Պրոսպեկտ Յովհաննէս

Չամառեանց:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՅԵՆՏԻՍԵՆ

Ի ՎԼԴԻՐ ԽԵՆԵ